

ՀԱՆԳԻՍԱՐԱՆ ԱՇԽԱՐՀԱՇԷՆ ՄԱՐԴԿԱՆ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ՓԱՐԻՉՈՒ ԴԵՍՊԱՆԱԺՈՂՈՎՈՆ ՄԷՉ ԳՏԵՈՒՈՂ ԱՆՁԱՆՑ ՎՐԱՑ.

ԿՈՄՍ ՎԱՆՎԱՍԻ. — Ծնած է 1810ին. մայրը լենացի է եղեր, ու պատանեկութեան ատենը մեծ եռանդով աշխատեր է Անգղիոյ մեծամեծները յորդորելու որ Լենաստանի ազատութեանը օգնեն: Զինուորական պաշտօններու մէջ մինչեւ զնգապետ ըլլալու ջափ առաջ երբայեւ ետեւ՝ հրաժարեցաւ այն աստիճանէն ու քաղաքական խնդրոց մէջ մտաւ Լուի-Ֆիլիպին քաղաքութեան օրերը, այլ եւ այլ օրագրաց մէջ իր կարծիքները հրատարակելով: Պ. Թիւրը արտաքին գործոց ոստիկան եղած ատենը, 1840ին, Վալեմպի կոմսը գործով մը եզրկտոս յուղարկուեցաւ. Պ. Կիզոյին ոստիկանութեան ատենն ալ Ամերիկա յուղարկուեցաւ իբրեւ լիազօր դեսպան: Անկէջ ետքը Փլորենսիոյ ու Նեապոլսոյ դեսպանութիւնները կատարեց, 1854ին ալ Լոնտոնի դեսպան եղաւ: Գրեթէ տարի մը կայ որ սենատ (sénateur) է, միանգամայն եւ ոստիկան արտաքին գործոց զաղդիական կայսերութեան. եւ այս պատճառաւ զանրեց ընտրուած էր Փարիզու դեսպանաժողովին:

ՊԱՐՈՆ ՏԷ ՊՈՒՐԲԵՆԷ. — Այս անձը առաջ Տէպալրագրոյն հրատարակիչներէն մէկն էր. յետոյ վեց տարի (այսինքն 1843էն մինչեւ 1848) Գաղղիոյ դեսպան եղաւ ի Կոստանդնուպոլիս: Արեւելեան պատերազմին սկսած ատենները Վեննայի դեսպան էր, ուստի եւ այն մայրաքաղաքին մէջ եղած դեսպանաժողովին մէջ գտնուեցաւ. անոր համար Փարիզ ալ եկաւ հիմակուան ժողովոյն ներկայ ըլլալու:

ԿՈՄՍ ՊՈՒՆ-ՇԱՆԿԷՆՔՈՅՆ. — Ծնած է 1797ին: Տասներինգ տարեկան հասակէն ի վեր քաղաքական գործողութեանց մէջ գտնուեցաւ իր հօրը ձեռքին տակն որ Գերմանական ազգաժողովին զանրեցն էր: Մինչեւ 1851, Եւրոպայի խիստ շատ տերութեանց մէջ դեսպանական պաշտօններ կատարեց մեծ զովութեամբ ու ճարտարութեամբ. այնպէս որ Աւստրիոյ Շվարցնպերկ իշխանը մեռնելու ատեն խորհուրդ տուաւ կայսեր որ իր տեղը Պոլ կոմսը անուանէ ոստիկան արտաքին գործոց. կայսրն ալ այնպէս ըրաւ, ու ամէն մարդ

կըմկայէ քէ իրացընէ արժանի է եղեր այն ընտրութեանը:

ՊԱՐՈՆ ՀԻՆՊԵՆԷ. — Ծնած է 1811ին ի Վեննա, եւ 1833ին մտեր է Մեքքէոնիք իշխանին ձեռքին տակը քարտուղարութեան պաշտօնով: Զորս տարի ետքը սկսաւ նետգնետէ Փարիզու, Լիսպոնայի ու Գերմանիոյ այլ եւ այլ դեսպանատանց մէջ պաշտօններ ունենալ. 1848ին Միլանու խռովութեան ատենը քանի մը ամիս գերի բռնուած մնաց հոն. յետոյ Վեննայի մէջ Շվարցնպերկ իշխանին ձեռքովը առաջ զնաց, ու 1849ին իբրեւ դեսպան յուղարկուեցաւ ի Փարիզ: Դեսպանական գործողութեանց մէջ քաւական անուն հանած է իբրեւ ճարտար մարդ:

ԼՈՐՏ ՔԱՐԷՆՏԵՆ. — Ծնած է 1800ին սկիզբը, ու Քեմպրիճի մէջ ուսմունքը սորվելէն ետեւ մտեր է դեսպանական գործողութեանց մէջ: Անգղիոյ տերութեանը կողմանէ իբրեւ դեսպան յուղարկուելով ի Մատրիտ 1833ին, Սպանիոյ մէջ սահմանադրական սկզբանց զօրանալուն շատ օգնեց: Գարձաւ Անգղիա 1838ին ու վերին խորհրդարանին անդամ եղաւ: Ինը տարի ետքը Իռլանտայի կառավարութիւնը ձեռք առաւ, եւ այն դժուար պաշտօնը քաջութեամբ կատարեց մինչեւ 1852. իսկ յաջորդ տարին ոստիկան եղաւ արտաքին գործոց, որով եւ Արեւելեան պատերազմին համար ելած ամէն խնդիրներուն մէջ գտնուեցաւ:

ԼՈՐՏ ՔԱՆԼԻ. — Ծնած է 1804ին: Իր հայրը արդէն 1841ին դեսպան էր Անգղիոյ ի Փարիզ. անոր ձեռքին տակը ինքն ալ շուտով առաջ զնաց: Նախ Վեննայի դեսպանատան գրագիր եղաւ, յետոյ Շրուքկարտի դեսպանատանը քարտուղար: Նոյնպաշտօնով Կոստանդնուպոլիս զնաց 1838ին, ու տարի մը Լորտ Սքրաֆորտ Քենինկին փոխանորդութիւն ըրաւ: Անգղիա դառնալէն ետեւ իր տերութեանը կողմանէ յուղարկուեցաւ իբրեւ դեսպան Գերմանական Դաշնակցութեան գլխաւոր քաղաքը, այսինքն Ֆրանքֆորթ, ուր եւ մնաց մինչեւ 1851 տարին. իսկ 1852ին Փարիզու դեսպան եղաւ՝ Լորտ Նորմանպիին տեղը:



Պուրբրեն. — Վալեմսի. — Պուլ. — Հիւսնէր. — Բըրենուրն.
 Բանի. — Յուրվ. — Պրունով. — Բալուր. — Վիլլամարինա.
 Ալի Փաշա. — Մենեմէտ ձեմիլ Պէյ :

ԿՈՄՍ ԱԼԵՔՍ ՕՌԼՈՎ. — Ծնած է 1787ին, եւ պատանեկութեան ատենէն զինուորական պաշտօններումէջ մտած ու Գաղղիոյ դէմ պատերազմներու մէջ գտնուած է : Աղեքսանդր Ա. կայսեր մահուրենէն ետեւ՝ երբոր 1825ին խոտովորիւնն ելաւ Փերրպուրկի մէջ, Օռլով կոմսը մեծ քաջութեամբ ցրուեց ապստամբները, որով եւ Նիկողայոս կայսեր շատ սիրելի եղաւ : Օսմանցւոց եւ Ռուսաց վերջըրներ պատերազմին ատենն ալ գտնուեցաւ, այսինքն 1828ին ու 1829ին, ու յետոյ Ադրիանուպօլսոյ դաշնադրութիւնը հաստատեց. յետոյ 1833ին, երբոր Եգիպտոսի կուսակալը սուլթան Մահմուտ արքային դէմ ելած առաջ կըքայէր, Օռլով կոմսը հասաւ Կոստանդնուպօլիս ու Հիւնքեար-Իսքէյեսիի դաշնադրութիւնն ըրաւ. որով արդիւնքն ու աստիճանն ալ աւելի բարձրացաւ : Արեւելեան պատերազմին սկսած ատենները Վեննա զնաց՝ Աւստրիան իր տէրութեան կողմը ձգելու մտքով, բայց վախճանին չհասաւ. հիմա այս դեսպանաժողովոյն մէջ ինչպէս որ Ռուսաց կայսեր մեծ վստահութիւնը կը վայելէ՝ նոյնպէս ալ միւս տէրութեանց դեսպաններուն շատ պատկանելի է կըսեն իր փորձառութեամբը :

ՊԱՐՈՆ ՊՐՈՒՆՈՎ. — Ծնած է Սաքսոնիոյ Տրեգտա քաղաքը, եւ ուսմունքը Լիփսիոյ մէջ սորված : Ռուսաց ծառայութեանը մէջ մտաւ 1818ին, եւ Արուիսկրանայի, Թրովփաի ու Լուպիանայի դեսպանաժողովներուն մէջ գտնուեցաւ, ինչպէս նաեւ Վերոնայի մեծ ժողովոյն մէջ : Այնուհետեւ Փերրպուրկի մէջ զանազան պաշտօններ կատարեց, Վոռնցով կոմսին հետ զնաց Օտեսսա, Օսմանցւոց դէմ պատերազմեցաւ 1828ին ու 29ին, յետոյ դեսպան ընտրուեցաւ Գերմանիոյ մէկ երկու տէրութեանց մէջ. ետքն ալ Լոնտրայի դեսպան

եղաւ ու հոն մնաց տասնըօրս տարի, մինչեւ որ 1834ին մայիսի 5ին ելաւ քաջուեցաւ՝ Արեւելեան պատերազմին պատճառաւ :

ԿՈՄՍ ՔԱՎՈՐ. — Ծնած է Թուրին քաղաքը 1809ին : Քաղաքական տնտեսութեան մեծ հմտութիւն ունենալով՝ շուտով առաջ զնաց, ու նախ վաճառականութեան ու երկրագործութեան, յետոյ եկամտից, ետքն ալ արտաքին գործոց ոստիկան եղաւ, եւ ինքն եղաւ զխաւոր յորդորելէն որ Փիեմոնթի տէրութիւնն ալ Գաղղիոյ եւ Անգղիոյ նիգակակցութեանը մէջ մտնէ Արեւելեան պատերազմին ատենը :

ՄԱՐԿԻՉ ՎԻԼԼԱՄԱՐԻՆԱ. — Առաջ դեսպան էր Փիեմոնթի տէրութեան Ֆիորենցա՝ քաղաքը, ուր միշտ զիտցաւ պատկանելի ընել իր հայրենիքը եւ Իտալական ազատութեանց պաշտպան կենալ. իսկ հիմա իր տէրութեան դեսպանն է ի Փարիզ :

ԱԼԻ ՓԱՇԱ. — Օսմանեան տէրութեան լուսաւորեալ մարդկանց առաջիններէն մէկն է, որով եւ արժանաւորապէս ընտրուեցաւ երկու անգամ մեծ վեզիր, եւ ոստիկան արտաքին գործոց, միանգամայն Վեննայի ու Փարիզու դեսպանաժողովներուն մէջ լիազօր դեսպան :

ՄԷԼԵՄԲԵՏ ՃԷՄՈՒ ՊԷՏ. — Իր հօրը Ռեշիտ փաշային ու այժմու մեծ վեզիր Ալի փաշային լուսաւոր սկզբանցը հետեւեղ, օսմանեան տէրութեան պիտոյքը լաւ հասկըցող, եւրոպական քաղաքակրթութեան յարգն ալ զիտցող անձ ըլլալով, տարակոյս չկայ որ արեւելքի օգուտներուն նախանձայոյց գործունեութեամբն ու խոհական վարմունքովը օր ըստ օրէ աւելի պիտի մեծնայ իր համբաւը՝ նաեւ դեսպանաժողովոյն վերջանալէն ետեւ :



ՀԱՅԿԱԶԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵՆԻԹԻՒՆ Ի ՏԱՃԿԱՍՏԱՆ Ի ԺԹ ԳԱՐՈՒ
ՎԵՐՆԱԳՐՈՎ

Պ. ՏՈՒՍՅԹ ԲՈՂՈՒԲԱԿԱՆ ՔԱՐՈԶՉԻՆ ԳԻՐԲԸ¹.

Բ.

Պ. Տուայք Հայաստանեայց եկեղեցւոյ պաշտօնեիցն ու կառավարութեանը վրայ քանի մը տող քան միայն խօսած է որ բաւական ուղիղ են. միայն քէ *էջմիածինը* Վրաստանի մէջ է ըսելը փոքրիկ սխալներէն մէկը կրնայ համարուիլ, որովհետեւ Լոնտրան Ռուսաստանի մէջ է ըսելուն կրնանք իսկ երբոր նոյն եկեղեցւոյն վարդապետութեանցը վրայ կրխօսի՝ նոյնպէս քանի մը տողով, գլխաւոր դիտաւորութիւնն այս է որ ցուցնէ քէ Հայք ալ Յունաց եւ Լատինացւոց վարդապետութիւններն ունին (որ իրեն համար մէյմէկ մոլորութիւն են). բայց այս ըսած առնեն ալ սխալներ շատ կրնէ : Վասն զի նախ այսպէս կրսէ :

« Հայոց, Յունաց եւ պապականաց մէջ եղած
« գլխաւոր տարբերութիւնն այս է. Յոյք եւ պա-
« պականք երկու բնութիւն կրդաւանին ի Քրիս-
« տոս, իսկ Հայք կրնաւատան քէ մարդն եւ Աս-
« տուած (մարդկութիւնն ու աստուածութիւնը)
« այնպէս միացեալ են ի Քրիստոս որ մէկ բնու-
« թիւն միայն մնացեր է. ասոր համար է որ Հայերը
« միաբնակ ըսուած են : » — Այս խօսքին սրբափանհիմն ըլլալը շատոնց իմացեր է ամեն մարդ՝ բաց ի Պ. Տուայքէն. եւ երբ ինքն ալ ուզէ հասկընալ՝ կրնայ կարդալ սրբոյն Ներսէսի ճշորհարոյթղերը, Լամբրոնացւոյն Ատենարանութիւնը եւ Յովնանու Իմաստասիրին զրուածքը որ լատիներէն եւ իտալերէն ալ բարգմանուած ու տպուած են, ու այս նիւրոյս վրայ երկարօրէն կրխօսին :

« Հայերը մտքերնին դրած են քէ Հոգին սուրբ
« ի Հօրէ միայն ելանէ. յայտ միարան են Յունաց
« հետ, եւ կրտարբերին ի պապականաց՝ որ կը-
« պնդեն քէ Հոգին սուրբ ելանէ ի Հօրէ եւ յմր-

LE CHRISTIANISME EN TURQUIE AU XIX^e SIÈCLE,

OUVRAGE DU RÉV. DWIGHT, MISSIONNAIRE
PROTESTANT¹.

II.

Ce que M. Dwight dit en quelques lignes au sujet des *officiants* et du *gouvernement* de l'Eglise arménienne est assez exact ; on pourrait cependant placer parmi ses inexactitudes de moindre importance l'assertion qu'*Edchmiadzine* est situé en *Géorgie* ! comme si l'on disait que Londres est en Russie. En parlant ensuite des *doctrines* de cette Eglise, pareillement en peu de lignes, il laisse apercevoir assez clairement son intention d'affirmer que les Arméniens professent des dogmes qui, suivant lui, seraient identiques à ceux des Grecs et des Latins, et, par conséquent, pour lui autant d'erreurs. Il y a plus : dans l'énumération de ces dogmes, il commet une foule de méprises. En effet, il commence par dire :

« La différence capitale entre les Arméniens, les
« Grecs et les papistes, est la suivante : les Grecs
« et les papistes croient à la double nature du
« Christ, tandis que les Arméniens croient que
« l'homme et le Dieu étaient tellement unis en
« Christ, qu'il n'y avait plus qu'une seule nature ;
« de là leur qualification de *monophysites*. » — Tout le monde sait, excepté peut-être M. Dwight, combien cette assertion est peu fondée ; il aurait suffi, pour s'en convaincre, de lire les *Lettres de S. Nersès Glazetzi*, le *Discours synodal de S. Nersès Lampronatzi*, et les *Oeuvres du patriarche Jean le Philosophe*, ouvrages qui ont été publiés, traduits en latin et en italien, et dans lesquels ce sujet est traité tout au long.

« Les Arméniens prétendent que le Saint-Esprit
« procède du Père *seulement* : en cela ils s'accordent
« avec les Grecs et diffèrent des papistes, affirmant
« que le Saint-Esprit procède du Père et du Fils. »

¹ Տես Ա. յօդուածը, էջ 45.

¹ Voir le numéro précédent, page 43.